ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հուլիսի 2 թիվ 61 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության քաղաքացիների ընդունելության առաջարկությունների, դիմումների և բողոքների բաժնի 2013 թվականի հունիսի 28-ի թիվ 20-8220 գրությունը և Արագածոտնի մարզի Արագած համայնքի բնակիչ Վ. Առաքելյանի դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագած համայնքի բնակիչ Վ. Առաքելյանի դիմումում նշված հարցերը ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրությունները կատարել սույն թվականի հուլիսի 12-15-ը և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. Հուլիսի 2 -ի թիվ 61-Ա
Կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Ս. Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

Կ. Ժամհարյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Ս. Մելքոնյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Հ. Ղոնաղչյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ